«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատանքների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Նախադպրոցականի աշխատանքային դաստիարակության գործընթացի կազմակերպումը, որը ուղղված է սանի մոտ աշխատելու պահնաջմունքի և աշխատասիրության ձևավորմանը

Դաստիարակ՝ Մարինե Իսախանյան

Մանկապարտեզ՝ «ՀՀ Տավուշի մարզի, Իջևան քաղաքի, Ժանետ Մարդիգյանի անվ.մանկապարտեզ ՀՈԱԿ»

2022

ԻՋԵՎԱՆ

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ Տեսական մաս

1.1. Աշխատանքային դաստիարակությունը որպես նախադպրոցական երեխայի ներդաշնակ զարգացում……5
1.2. Աշխատանքային գործունեության նպատակը և արդյունքները……8
1.3. Աշխատանքային դաստիարակության նպատակն ու խնդիրները……11

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴՆախադպրոցականի աշխատանքային դաստիարակության գործընթացի կազմակերպումը, որը ուղղված է սանի մոտ աշխատելու պահնաջմունքի և աշխատասիրության ձևավորմանը

2.1. Նախադպրոցական տարիքի երեխաների հետ կազմակերպվող աշխատանքի կազմակերպման ձևերն ու տեսակները……13
2.2. Աշխատանքային դաստիարակության մեթոդները և մանկավարժական պայմանները……18

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ Հետազատական աշխատանքը մանկապարտեզում, տնօրենի և փոխտնօրենի եզրակացությունը……20

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……..……25

Օգտագործված գրականության ցանկ……27

Ներածություն

Աշխատանքային դաստիարակությունը որպես մարդու բնորոշ նպատակաուղղված գործունեություն է, որն ուղղված է սեփական կարիքների և պահանջմունքների բավարարմանը՝ առարկայական աշխարհի ստեղծագործական վերափոխման եղանակով: Աշխատանքը բնական պահանջմունք և գոյատևման ձև է:

Նախադպրոցական տարիքի երեխաների աշխատանքային դաստիարակության հիմնական և կարևոր խնդիրը վաղ տարիքից աշխատանքային սովորության ու հմտության դաստիարակումն է ինչպես և աշխատավոր մարդկանց նկատմամբ սիրո և հարգանքի դաստիարակումը:

Մանկապարտեզում աշխատանքային դաստիարակությանն ուղղված գործունեությունը նպատակ ունի բազմակողմանիորեն զարգացնել երեխաներին որպես անձնավորություն և նրանց նախապատրաստել աշխատանքի հանուն հասարակության բարօրության:

Մեր նպատակն է աշխատանքային դաստիարակության միջոցով երեխաների մեջ ձևավորել բարոյական կամային հատկություններ՝ նպատակասլացություն, դժվարությունները հաղթահարելու և նախաձեռնության ցուցաբերելու ունակություն, գործը մինչև վերջ հասցնելու հասահակակիցների խմբում կազմակերպված և ուրախությամբ աշխատելու սովորություն:

Մանկապարտեզում աշխատանքային դաստիարակությունը կազմակերպելու համար պետք է հստակ որոշենք դաստիարակչական խնդիրները երեխաներևի հետ տարվող աշխատանքների ամեն մի ձևում օգտագործենք առօրյա կյանքում ստեղծված իրավիճակները: Երեխաների մեջ աշխատանքային ջանքեր գոծադրելու սովորություն ձևավորելու և բոլորին սիստեմատիկորեն աշխատանքի մեջ ներգրավվելու համար:

Նախադպրոցական տարիքում երեխան մեծ հետաքրքրություն է ցուցաբերում դեպի իր շրջապատը և ձգտում ակտիվորեն գործել: Ճիշտ դրված աշխատանքային դաստիարակության պրոցեսում երեխան ձեռք է բերում առաջին պատկերացումները շրջապատի նկատմամբ: Նրա մեջ ձևավորված սեր դեպի աշխատանքը, որը պահպանված է ամբողջ կյանքում, երեխան սովորում է ընկերների խմբում աշխատելու սովորություն և ունակություն:

Աշխատանքի մեջ երեխան ընկալում է աշխարհը և այդ ընթացքում ձեռք բերված գիտելիքներն ավելի արժեքավոր են լինում, քանի որ ամուր են մնում երեխայի հիշողության մեջ, որովհետև այն կապված է գործունեության հետ, որին մասնակցում են երեխայի բոլոր վերլուծիչներն ու անձնական փորձը: Դաստիարակի կողմից կազմակերպված աշխատանքային գործունեության մեջ մեծի խոսքը, օրինակ ցուցադրումը հարստացնում են երեխաների գիտելիքներն ու ունակությունները և դրանք դարձնում ավելի ճիշտ, խորը և հաստատուն: Երեխաներին օգնում ենք խորհրդով , տալիս ենք բացատրություններ: Մեր ճիշտ ուղղորդությամբ երեխայի համար բացահայտում է աշխպատանքի նպատակը, երեխային տրամադրում է դեպի աշխատանքը : Պետք է ճիշտ բացատրել յուրաքնաչյուր գործողության իմաստը

Գիտական հետազոտությունները սահմանվել են, որ երեխայի ամենավաղ տարիքում նյարդային համակարգի պլաստիկությունը այդ տարիքը դարձնում է ունակությունների և հմտությունների դաստիարակության առավել բարենպաստ ժամանակաշրջան: Դաստիարակման պրոցեսում վարքի բարոյական մոտիվների ազդեցության զարգանում ու կերպարանափոխվում է երեխաների հետաքրքրությունը դեպի աշխատանքը:

Նախադպրոցական տարիքում երեխայի աշխատանքային գործունեությանը բնորոշ են հետևյալ առանձնահատկությունները.

- աշխատանքը նյութական արժեք չի ստեղծում
- Աշխատանքային խաղային բնույթը
- Աշխատանքի իրադրային և ոչ պարտադիր բնությը
- Աշխատանքի արդյունքի պայմանավորվածությունը մեծահասակների օգնությամբ
- Աշխատանքային գործունեության տարերային բնույթը:
- Աշխատանքային հմտությունների ընդհանուր բնույթը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1. 1. Աշխատանքային դաստիարակությունը որպես նախադպրոցական երեխայի ներդաշնակ զարգացում։

Նախադպրոցական տարիքի երեխայի աշխատանքային գործունեությունը որպես մարդկային կարևորագույն գործոն ձևավորում է հենց այդ տարիքում։ Ն Կրուպսկայան դաստիարակչական մեծ նշանակություն է տալիս երեխաների աշխատանքային դաստիարակությանը։ Այս հարցի առթիվ նրա կողմից ձևակերպել է մանկավարժական պահանջներ մտավոր աշխատանքի և խաղի հետտ ֆիզիկական աշխատանքիւ կապի վերաբերյալ պարտականությունների բաշխման ժամանակ յուրաքանչյուր երեխայի հետաքրքրվածությունների հաշվառման երեխաների կոլեկտիվ աշխատանքի և նրանց մեջ որոշ կազմակերպական բարձր հմտությունների դաստիարակման մասին։

Ե.Տիխեևայի կողմից ղեկավարված մակապարտեզում լայն կիրառում էր ստացել երեխաների աշխատանքը, հերթապահությունը տնտեսական աշխատանքը կենդանիների և բույսերի խնամքը։ Ճիշտ է երեխայի աշխատանքը նյութական բարիք չի ստեղծում, հաճախ նույնիսկ արդյունք չի տալիս, բայց այն ունենում է իր լուրջ դաստիարակչական նշանակությունը։ Աշխատանքը ավելի է մտերմացնում երեխաներին մեծահասակների հետ։ Նա կարծես սկսում է ճանաչել իր սեփական հնարավորություններին սովորում է պլանավորել և վերահսկել իր գործողությունները և դրա հիման վրա ձեռք է բերում կյանքի հմտություններ։ Նախադպրոցական երեխայի աշխատանքը այնպիսի գործունեություն է, որի առանձնահատկությունները հատուկ են միայն այդ տարիքի երեխաների աշխատանքին։

Կրուպսկայան և Մակարենին այն կարծիքն էին հայտնում թե երեխայի աշխատանքային հատկություններն ու վարքագծի աշխատանքային ընդհանուր ուղղվածությունը, նրա կազմակերպական ունակությունները պետք է դաստիարակվեն նախապես, մինչև դպրոցը, այսինքն՝ մանկապարտեզի և ընտանիքի պայմաններում։ Ժամանակակից ֆիզիոլոգայի տվյալները, բացահայտելով աշխատանքային գործունեության ժամանակ երեխայի օրգաններում տեղի ունեցող

պրոցեսների ներքին մեխանիզմը հիմնավորվում են երեխայի զարգացման ֆիզիկական և հոգեկան միասնությունը: Սեչենովի և Պավլովի ուսմունքը բացահայտում է մկանային շարժումների նշանակությունը ոչ միայն երեխայի ֆիզիկական այլ մտավոր զարգացման համար: Իր մեջ ֆիզիկական և մտավոր ուժի լարում պարունակող յուրաքնաչյուր պրոցես զարգացնում է երեխաների ուշադրությունը դիտողականությունը, հնարամատությունը: Ինչպես Կրուպսկայան է ասում, երեխան աշխատում է, գլխով և ձեռքով[1]:

Նախադպրոցական երեխան ընդունակ է ինքնուրույն աշխատանքային գործունեության, կարող է պլանավորել և առաջնորդվել գործունեության ընթացքում սեփական դրդապատճառներով, նույնիսկ վերահսկել գործունեւության ընթացքն ու արդյունքը: Աշխատանքային դաստիարակության նպատակը ոչ այնքան աշխատանքային գործունեության պատրաստի ձևավորումն է, որքան աշխատանքի դրդապատճառների զարգացումն է և ինքնուրույն աշխատելու ունակությունը: Աշխատանքային գործունեության ձևավորումը ինքնանպատակ չէ, այլ ընդամենը միջոց է տարբեր բնույթի խնդիրների լուծման աշխատանքային գործողությունների օգնությամբ կյանքում հանդիպող դժվարությունների և իրադրությունների հաղթահարմանը: Կյանքում չօգտագործվող գիտելիքը և կարողությունը կամ այն գիտելիքը, որը չի ամրացվում պրակտիկ գործողունեության ընթացքում, կորցնում է իր բուն նշանակությունը. «Երեխայի զարգացման համեմատ նույնիսկ ամենաանդուրեկան աշխատանքը նրան բավականություն կպատճառի, եթե աշխատանքի հասարակական արժեքը նրա համար ակնհայտ լինի»[2]

Աշխատանքային դաստիարակության այս տրամաբանումը առաջին հերթին կոչված էնախապատրաստելու երեխային կյանքի դժվարությունների հաղթահարմանը, նպաստելու երեխայի սոցիալական հասունացմանը, աշխատանքի արդյունքի հասարակական արժեվորմանը, միևնույն ժամանակ նպաստում է՝անձնային որակների դաստիարակությանը: Խաղի հետ աշխատանքի կապը դաստիարակի կողմից օգտագործվում է միջին և բարձր խմբերում՝ մի շարք աշխտանքային հմտություններ ամրապնդելու և զարգացնելու համար: Աշխատանքային դաստիարակության հիմնական խնդիրը երեխայի մեջ զարգացնել

[1] Н. К. Крупская, Избранные педагогические произведения, изд. АПН РСФСР, 1955 стр.466.
[2] А. С. Макаренко Избранные педагогические произведения, Учпедгиз, 1946, стр. 277.

բարոյական, ֆիզիկական և մտավոր կարողություններ։

Աշխատասիրությունը բարոյական հատկանիշ է։ Այն հարգանք է իր և ուրիշների աշխատանքի հանդեպ։ Մանկապարտեզը այդ հարցում չպետք է մենակ աշխատանքներ տանի երեխաների մոտ աշխատասիրություն դաստիարակելու համար։ Երեխան առաջին հերթին ձևավորվում է որպես անհատ ընտանիքում։ Ծնողական անտեղի չափից դուրս հոգատարությունը, որը պատրաստ է երեխայի փոխարեն կատարել ամեն ինչ, չի թողնում, որ երեխայի մոտ ձևավորվի ինքնուրույն աշխատանքը։ Փորձը ցույց է տվել, որ դեռ վաղ տարիքից սկսած երեխան ինքնուրույնություն է ձեռք բերում. ուտում, հագնվում, հանվում, խաղում կառուցողական խաղալիքներով, որը ուղեկցվում է զանազան շարժումներով և մկանային վարժություններով, խիստ առողջատար է և այն օգնում է երեխայի մտավոր կարողությունների զարգացմանը։

Ա. Ս. Մակարենկոն մեծ նշանակություն է տալիս «խաղեր-նյութերին», քանի որ նրանք երեխաներին ավելի են մոտեցնում իսկական աշխատանքին։ «Եթե կան ապակու կամ փայտի կտորներ, դրանցից կարելի է պատրաստել պատուհաններ, իսկ դրա համար պետք են շրջանակներ, հետևապես ծագում է տուն կառուցելու հարցը»։ [3]Նման նյութերով անցկացվող աշխատանքը զարգացնում է երեխայի միտքը, երեխային հանգեցնում է վերլուծելու և ամփոփելու իր երևակայության մեջ ամբողջը և նրա մասերը պատկերացնելու տարրական ունակություններին, զարգացնում ստեղծագործական երևակայությունը։ Ցանկացած աշխատանքին ստեղծագործական մոտեցումը պետք է դառնա դաստիարակության հիմնական խնդիրը։ Ստեղծագործական աշխտանք հնարավոր է միայն այն ժամանակ, երբ այն կատարվում է սիրով, գիտակցաբար, և աշխատանքը դառնում է ինքնադրսևորման միջոց։ աշխատանքի ընթացքում երեխան ձեռք է բերում ոչ միայն աշխատանքային որակներ, այլև մարդկանց հետ հաղորդակցվելու համատեղ աշխատելու կարողությունները։ Նրանց մեջ ձևավորվում է ընկերասիրության զաղափարը

[3] А. С. Макаренко Мнении о воспитание детей, Учпедгиз, 1953, стр. 47.

1. 2. Աշխատանքային գործունեության նպատակը և արդյունքները

Աշխատանքային գործունեության կարևորագույն բաղադրիչներն են աշխատանքի նպատակն ու արդյունքը։ Աշխատանքային գործունեության նպատակն արտացոլում է աշխատանքի արդյունքի հասնելու ուղին։ Նպատակը բխում է ակնկալվող արդյունքից և ուղղված է դրան։ Աշխատանքի նպատակադրումը բավական բարդ կարողություն է և ձեռք է բերվում նախադպրոցական տարիքում աստիճանաբար։Կրտսեր նախադպրոցականները ընդունակ չեն ինքնուրույն որոշելու աշխատանքի նպատակը քանի որ չեն կարողանում մտապահել աշխատանքի ողջ ընթացքը։ Բացի այդ կրտսեր նախադպրոցականը ընդունակ չէ գիտակցելու աշխատանքի նպատակադրման անհրաժեշտությունը։ Նրիան հետաքրքիր է միայն աշխատանքը և գործողությունների իրականացման հաջորդականությունը։ Կրտսեր տարիքի երեխաների աշխատանքային գործունեությունը արտահայտվում է ինքնասպասարկման մեջ։ Օրինակ փոքրերը լվանալ ձեռքերը, սրբել։ Սրանք ինքնասպասարկման ձևեր են,քանի որ դա այնպիսի գործունեություն է որի մեջ աշխատանքային խնդիրը դրվում է նրա առաջ, որպես կենսական անհրաժեշտություն։ Երեխաները որոշակի մասնակցություն են ունենում խաղալիքների, նյութերի պատրաաստման աշխաատանքներին և կամաց ներգրավվում են ընդհանուր գործերի մեջ։ Դաստիարակին օգնում են հավաքել խաղալիքները, դասավորել սահմանված տեղում,գրքերը նայելուիւց հետո դնել տեղը, բաժանել մատիտներ, թղթեր։

Երեխան ամեն օր ականատես լինելով մեծերի աշխատանքին ցանկություն է առաջանում աշխատելու։ Երեխաներին հանձնարարվում է անհատական ձևով առաջադրանք, օրինակ՝ «գդալները բեր, խաղալիքը տեղը դիր և այլն»։ Այս ամենը երեխան կատարելով իր մեջ հետաքրքրություն է առաջանում աշխատանքի նկատմամբ, աշխատելու ցանկություն և ուրախ տրամադրություն։ Անհրաժեշտ է, որ երեխաները կարողանան միասին աշխատել իրենց ուժերի չափով կատարել գոնե ամենափոքր մասը, որպեսզի նա մասնակցություն ունենա ընդհանուր գործին։ Այս տարիքում երեխայի ուշադրությունը շուտ է շեղվում և պետք է սկզբից երեխաներին տալ պարզ միատեսակ աշխատանք որպեսզի նրանք բոլորը կարողանան միաժամանակ կատարել։ Միջին խմբում ընդլայնվում է երեխայի աշխատանքի

բովանդակությունը և նրանց հանձնարարում ենք որոշ չափով ավելի բարդ բնույթի աշխատանք: Այս խմբում երեխաները ավելի ակտիվ են և ինքնուրույն:

Աշխատանքային գործունեության նպատակն ու արդյունքները խիստ փոխկապակցված են: Ավագ նախադպրոցական տարիքում արդեն երեխան ընդունակ է ինքնուրույն որոշելու աշխատանքային գործունեության նպատակը և նույնիսկ կանխատեսելու դրա նյութականացված արդյունքը: Նա գիտակցում է աշխատանքի նպատակադրման անհրաժեշտությունը և ընդունակ է հասկանալու նաև աշխատանքի հեռահար նպատակները, որոնք առաջարկվում են իրենց մեծահասակների կողմից: Ինչպես տեսնում ենք, նախադպրոցականի աշխատանքային գործունեության առաջին բաղադրատարրը ձևավորում է մեծահասակի ակտիվ մասնակցությունը: Հաջորդ մասն են կազմում աշխատանքային գործունեության նպատակին ծառայող աշխատանքային գործողությունները, որոնց ձևավորման ընթացքում երեխան համեմատաբար ինքնուրույն է:

Աշխատանքային գործողությունները յուրացվում են կամ մեծահասակներին ուղղակի ընդօրինակելու ճանապարհով կամ ձևավորվում են առարկայաորոնողական գործունեության զարգացման ընթացքում: Աշխատանքային գործողությունները ինքնանպատակ չէ, այն աշխատանքային գործունեության նպատակի իրականցման միջոց է: Աշխատանքային գործունեության նպատակաուղղված ձևավորման ընթացքում կարևորվում է ոչ միայն այն թե ինչ և ինչպես է անում, այլ այն թե հանուն ինչի է անում, որն է աշխատանքային գործունեության դրդապատճառը: Երեխայի աշխատանքային գործունեության դրդապատճառները բազմազան են: Օրինակ դրդապատճառի դերում կարող է հանդես գալ ցանկացած հոգեկան գործընթացի դրսևորման անհրաժեշտությունը կամ հուզական վիճակը բնավորության գիծը: Հաճախ երեխան ինքն էլ չի կարողանում բացատրել թե ինչ և ինչու է ուզում: Ուզում է և վերջ:

Երեխայի աշխատանքային գործունեության հիմնական դրդապատճառը աշխատանքային գործունեութան ընթացքում մեծահասակի գնահատականին արժանանալու ցանկությունն է, նրանց հետ երկարատև շփվելու պահանջմունքը: Հզոր դրդապատճառ է նաև ինքնահաստատման պահանջմունքը, որով երեխան ընդունակ է գործադրելու լուրջ ջանքեր և համբերատար վերաբերմունք նպատակին

հասնելու համար։

Աշխատանքային գործունեության բաղադրամասերից է գործունեության պլանավորումը՝ բաղկացած հետևյալ փուլերից. Աշխատանքի կազմակերպման, իրականացման և գործունեության ընթացքի և արդյունքի գնահատման,վերահսկման փուլերից։ Երեխան սկզբից փորձում է պլանավորել սեփական գործողությունները գործնականորեն։ Նա մտովի պլանավորում է գործողությունների ընթացքը և հետևում դրան։ Հետագայում նա սովորում է պլանավորել և ձևակերպել պլանը բառերով։ Հաջորդ բաղադրամասը գործունեության ընթացքն է, որը յուրաքանչյուր տարիքային շրջանում ունի իր առանձնահատկությունները։ Աշխատանքային գործունության ընթացքը աստիճանաբար բարդանում է, ինչ պայմանավորված է աշխատանքային գործունեության վերոհիշյալ բաղադրատերի ձևավորման աստիճանով, ինչպես նաև երեխայի անձնային խառնվածքային առանձնահատկություններով։

Աշխատանքային գործունեությունը ավարտվում է աշխատանքի արդյունքով։ Փոքրերին հետաքրքրում է ոչ թե նյութական արդյունքը այլ բարոյականը՝մեծահասակի դրական գնահատականը։ Ավագ խմբում կարևորում են նյութական գործնական արդյունքը, մեծահասակի գնահատականը մղվում է երկրորդ պլան։ Երեխան սկսում է գնահատել սեփական գործուենության արդյունքը, ձեռքբերելով ինքնագնահատման օբյեկտիվությունը։ Սեփական գործունեության արդյունքի գնահատման կարողությունը հնարավորություն է տալիս նրան գնահատել նաև հանրօգուտ աշխատանքի արդյունքը, որն ուղղված է բոլորին,հետևաբար ունի հասարարական նշանակություն։

Ամփոփելով աշխատանքային բաղադրիչների ձևավորման ընթացքը, համոզվում ենք, որ աշխատանքային գործուենության ձևավորման տրամաբանության ուղղված է աշխատելու ցանկություն և կարողությունների զարգացմանը։ Աշխատանքային գործունեության զարգացումը աշխատանքային դաստիարակության կարևորագույն խնդիրներից մեկն է։

1.3. Աշխատանքային դաստիարակության նպատակն ու խնդիրները

Մանկապարտեզում աշխատանքային դաստիարակությունը պարտադիր գործընթաց է, որի շնորհիվ երեխան զարգացնում է դրական վերաբերմունք աշխատանքի նկատմամբ, աշխատելու ցանկություն և կարողություն: Աշխատանքում երեխան կոփվում է ֆիզիկապես երեխայի մոտ զարգանում է ուրիշին օգնելու ցանկություն, զարգանում է ուրիշին օգնելու ցանկություն, զարգանում է ինքնուրույնություն, դառնում է նախաձեռնող, զարգանում է մտավոր ունակությունները, մտածողությունը և հիշողությունը:

Աշխատանքային դաստիարակության ուղղությամբ տարվող մանկավարժական աշխատանքը բաժանվում է երկու մասի և առանձնացվում է երկու խումբ: Առաջին խմբի խնդիրներն ուղղված են աշխատանքային գործունեության բաղադրամասերի ձևավորմանը, որի արդյունքում ձեռք է բերվում գիտակից վերաբերմունք աշխատանքի արդյունքի նկատմամբ, ձևավորվում է աշխատելու ցանկություն: Երկրորդ խմբի խնդիրները կոչված են լուծելու անձնական զարգացման հիմնահարցեր և ուղղված են աշխատանքի ընթացքում անձնային որակների դաստիարակությանը:

Առաջին խմբի խնդիրներն են.

- Աշխատանքի հանդեպ հարգանքի և գիտակից վերաբերմունքի ձևավորումը
- Աշխատանքային գործունեության կառուցվածքային տարրերի ձևավորումը
- Աշխատանքային կարողությունների և հմտությունների ձևավորումը
- Աշխատելու պահանջմունքի ձևավորումը

Երկրորդ խմբին են պատկանում հետևյալ խնդիրները.

- Բարոյակամային հատկությունների ձևավորումը
- Աշխատանքային դաստիարակություն
- Սոցիալական հատկությունների և հմտությունների ձևավորում
- Աշխատանքային գործնական փոխհարաբերությունների ձևավորումը:

Աշխատանքային դաստիարակության խնդիրները նախադպրոցական տարիքում իրականացվում են երեխաների աշխատանքի ձևերի կազմակերպման և ղեկավարման միջոցով։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Նախադպրոցական աշխատանքային դաստիարակության գործընթացի կազմակերպումը, որը ուղղված է սանի մոտ աշխատելու պահանջմունքի և աշխատասիրության ձևավորմանը

2.1 Նախադպրոցական տարիքի երեխաների հետ կազմակերպվող աշխատանքի կազմակերպման ձևերն ու տեսակները

Նախադպրոցականների աշխատանքային դաստիարակության գործընթացը կազմակերպվում է հետևյալ հինգ տեսակի աշխատանքներով՝

- Ինքնասպասարկում
- կենցաղային-տնտեսական աշխատանք
- աշխատանք բնության գրկում
- Ձեռքի և գեղարվեստական աշխատանք
- Ուսումնական կամ մտավոր աշխատանք

Մանկապարտեզում աշխատանքային դաստիարակությունը կազմակերպելու համար անհրաժեշտ է հստակորեն որոշել դաստիարակչական խնդիրները երեխաների հետ տարվող աշխատանքի ամեն մի կոնկրետ ձևում օգտագործել առօրյա կյանքում ստեղծվող իրավիճակները երեխաների մեջ աշխատանքային ջանքեր գործադրելու սովորություն ձևավորելու և բոլորին սիստեմատիկաբար աշխատանքի մեջ ներգրավելու համար: Հաշվի առնել նախադպրոցականների աշխատանքի առանձնահատկությունները տարբեր տարիքային փուլերում երեխաների զարգացման մակարդակում նրանց նկատմամբ ցուցաբերելով անհատական մոտեցում տարբեր աշխատանքներ կազմակերպելու ընթացքում: Մանկապարտեզում և ընտանիքում ստեղծել աշխատանքային մթնոլորտ պահպանել հիգենիկ պայմանները և անվտանգության կանոնները: Դաստիարակը երեխաների տարիքային առանձնահատկություններին համապատասխան պետք է տարբերի աշխատանքների աստիճանաբար բարդացման սկզբունքը, նկատի ունենալով աշխատանքային գործունեության ծավալի աճը տարիքային յուրաքանչյուր խմբում:

Նախադպրոցական տարիքի երեխաների աշխատանքը նույնիսկ տարրական

ձևերում ունի հստակ նպատակ, նկատելի արդյունք, ուստի նախադպրոցականների կողմից կատարվող ամեն մի աշխատանք նպատակաուղղված է որոշակի նպատակի։ Սկզբում այդ նպատակը որոշում է դաստիարակը՝ երեխաներին սովորեցնելով տեսնել ինչ-որ բան անելու անհրաժեշտությունը, դրան հասնելու ուղիները։

Երեխաներին սովորեցնում ենք մտովի պատկերացնել կատարվելիք աշխատանքի գլխավոր փուլերը, պլանավորելու իր անելիքները. ինչից սկսել ինչպես կատարել ինչով ավարտել աշխատանքը։ Նպատակը պետք է ելնի այն իրականացնելու հնարավորությունից, հաշվի առնելով բոլոր պայմանները, մտածելու և նպատակադրվելու կարողությունը, աշխատանքի նախապատարստումը նյութերի և կահավորանքի առկայությյունը աշխատանքի ծավալի սահմանումը խմբային աշխատանքի դեպքում յուրաքանչյոուրի պարտականությունը։ Երեխաներին տալիս ենք հնարավորություն, որպեսզի ինքնուրույն կողմնորոշվեն թե ինչպես կարելի է տվյալ դեպքում աշխատել։

Երեխաներին առաջարկեցի խմբասենյակը զարդարել նոր տարվա կապակցությամբ։ Նրանց տվեցի հնարավորություն որ իրենք որոշեն թե ինչպես ձևավորել որ գեղեցիկ ստացվի։ Նրանցից յուրաքանչյուրը տարբերակ էր առաջարկում, չկար ճիշտ կամ սխալ։ Ամենը յուրովի էր։ Շատ ուրախ և ակտիվ քննարկում էր։ Եվ որոշեցին տոնածառը տեղադրել խաղալիքների պահարանի տեղը, քանզի ամենահարմար տեղը դա էր։ Հանձնարարություն կատարելը, խմբով աշխատելը մանկապարտեզում, երեխաների աշխատանքի կազմակերպման հիմնական ձևերն են։Հանձնարարությունները օգտագործվում են երեխաներին տարբեր առաջադրանքների կատարմանը մասնակից դարձնելու համար։

Մանկական աշխատանքի կազմակերպման այս ձևն օգտագործվում է տարիքային բոլոր խմբերում։ Կրտսեր խմբերում հանձնարարությունը երեխաների աշխատանքի կազմակերպման առաջատար և կարևորագույն ձևն է, որովհետև այդ տարիքի երեխաները դեռևս բավականաչափ ինքնուրույն չեն. Իրենց գործողություններում ընդօրինակման հակում ունեն, չեն կարողանում իրենց գործողությունները համաձայնեցնել ընկերների գործողություններին։ Իսկ երբ երեխաները արդեն ունենում են աշխատանքային որոշ փորձ դաստիարակը պետք է օգտագործի խմբային հանձնարարության մեթոդը։ Հանձնարարություն տալուց առաջ

դաստիարակը պետք է մատնանշի կոնկրետ խնդիրը։

Երեխաները պետք է սովորեն ուշադրություն դարձնեն կարգուկանոնի պահպանմանը։ Կենցաղային աշխատանքների կազմակերպմանը և կատարմանը մասնակցելու կարողությունը ձևավորվում է նաև այն դեպքում, երբ երեխաները ներգրավվում են խաղալիքների մաքրման, սպասքացրման, օգտագործված ամանեղենը հավաքելու, լվանալու խմբասենյակը կամ պարապմունքների վայրը նախապատրաստելու և բազմազան այլ աշխատանքներում։ Օրինակ՝ խմբի խաղալիքները օրվա վերջում լվանալու առաջարկին բոլորը մեծ ոգևորությամբ ուզում են մասնակից լինել։ Երբ տեսնում եմ թե ինչպիսի ջանասիրությամբ են խոզանակով լվանում խաղալիքները մյուսները պարզաջրում մի խումբն էլ զբաղվում է չորացնելով, իսկ մյուս երեխաները դասավորում են համապատասխան տեղում, հավատում եմ, որ այս երեխաների մոտ արդեն իսկ ձևավորվում է համագործակցումը, փոխօգնությունը, աշխատելու ձգտումը և աշխատանքից ստացած բերկրանքը նրանց ավելի ինքնավստահ է դարձնում։

Երեխան սովորում է աշխատել և հասկանում է աշխատանքի գերագույն նշանակությունը միայն ընդօրինակելով և փորձելով նմանվել մեծահասակներին հետևաբար և շուտ մեծանալ։ Աշխատանքային գործունեության արդյունքի հասարակական արժեքը գիտակցվում է երեխայի կողմից այս ճանապարհով։ Սկզբում երեխան պարզապես ընդօրինակում է մեծերի աշխատանքը և այն կիրառում է իր խաղերի մեջ։ Երեխան ազատ է իր դերը ընտրելու խաղի ժամանակ։ Մեկը մայրիկն է, որ ճաշ է պատրաստում, ավլում հատակը, սրբում տունը, տղաները վարորդներ են, որոնք մեքենա են վարում։ Սա ընդամենը խաղ է, բայց նրա հիմքում ընկած է աշխատանքի ծիլերը, որը կամաց-կամաց մեծանալով դառնալու է երեխայի աշխատանքային գործունեության հիմնական մասը։ Ես մտնում եմ նրանց ստեղծած խաղի մեջ և աննկատ ուղղորդում դերերի ճիշտ կատարմանը։ Իսկ երբ երեխայի կատարած գործը գովասանքի ես արժանացնում, նրանց աչքերը փայլում են ուրախությունից և ոգևորությունից։ Երեխան իրա խաղերում ընդօրինակում է մեծերի աշխատանքը տարբեր մասնագետների աշխատանքի ընդօրինակմամբ։

Այս աշխատանքի արդյունքը խիստ կարևոր է, թեև երբեմն նկատելի չէ ինչպես աշխատանքի մյուս տեսակներինը, ուստի անհրաժեշտ է երեխաների

գիտակցությանը հասցնել այդ աշխատանքի անհրաժեշտությունը։Միջին խմբերում երեխաներին հանձնարարություն եմ տալիս ջրել ծաղիկները, չորացած սերմերը հավաքել, իմ օգնությամբ ջրում ենք նաև մեր հողամասի նորատունկ ծառերը, որոնք տնկել եմ խմբերի երեխաների օգնությամբ։ Երեխան աշխատելով բնության մեջ ճանաչում է բնության գեղեցկությունն ու բարոյական հզոր ուժը։ Այն երեխաների աշխատանքային, բարոյական, էկոլոգիական և գեղագիտական դաստիարակության արդյունավետ միջոց է։ Երեխան շփվելով որոշ աշխատանքային գործիքների/ բահ, փոցխ. . ./ հետ, կարծես ինքն էլ է մասնակից դառնում մեծերի աշխատանքին։ Երբ երեխան խաղում է կամ բեմականացնում բնության մեջ աշխատանքի դրվագներ, նա ներքուստ մեծ բավականություն է ստանում այդ «աշխատանքից»։ «Պապն ու շաղգամը» հեքիաթը դարձրի երաժշտական բեմականացում, որտեղ պապը աշխատում է բահով, հողն է փորում, սերմ է ցանում, երեխան կարծես իրական աշխատանք է կատարում։ Տատիկը տնային գործերով է զբաղված, թոռնիկը փիսիկին ու շնիկին է խնամում։ Այսպես յուրաքանչյուրը զբաղված է իր աշխատանքով։

Երեխաները բեմականացման միջոցով զգացին, որ աշխատանքը վերջում արդյունք է տալիս ինչպես նյութական, այնպես էլ բարոյական։ Երեխաները հասկացան, որ պետք է իրար օգնեն, երբ դժվարություններ են առաջանում։ Նրանք ծանոթացան մեծերի աշխատանքային գործիքներին։

Ձեռքի և գեղարվեստաստեղծագործական աշխատանքով երեխաները զբաղվում են 4-5 տարեկանից։ Այս աշխատանքը մեծ նշանակություն ունի երեխայի հետագա զարգացման համար։ Նպաստում է երեխայի կառուցողական ընդունակությունների, կողմնորոշման զարգացմանը, աշխատանքի նկատմամբ հետաքրքրության և ճիշտ վերաբերմունքի դաստիարակմանը։ Ձեռքի աշխատանքը կազմակերպվում է փոքրիկ խմբերով։ Զբոսանքների ժամանակ երեխաների հետ հավաքում ենք կոներ, տերևներ, չոր ճյուղեր և այլն։ Երեխաները սովորում են աշխատել բնական նյութերով։ Տոնական օրերին լավագույն աշխատանքները դառնում են ցուցահանդեսի նյութեր։ Մանկապարտեզում այս աշխատանքները տարվում են երկու ուղղությամբ.

1. Երեխաները պատրաստում են ինքնաշեն խաղալիքներ

2. Երեխաները սովորում են զարդարել խմբասենյակը, դահլիճը, սեփական ուժերով պատրաստած իրերով։

Ուսումնական կամ մտավոր աշխատանքը ունի ուսումնական բնույթ քանի որ, կազմակերպվում է որևէ նոր բան հայտնագործելու նպատակով և ենթադրում է մտավոր լուրջ գործադրում։ Մտածելու, վերհիշելու, երևակայելու և հաջորդաբար որոշակի գործունեություն կատարելու արդյունքում երեխան տեսնում է իր աշխատանքի ակնկալվող վերջնարդյունքը։ Օրինակ երեխան վերանորոգելով գիրքը կամ խաղալիքը, նյութական արդյունք է ստանում։

Երեխաները տրամաբանական վերլուծություն են կատարում, զույգերով աշխատում են, հաշվում են, այսինքն կատարում են մտավոր աշխատանք։ Երեխայի մտավոր աշխատանքին բնորոշ են գործողություններ, դրդապատճառ, պլանավորում, ընթացք և արդյունք։ Մտավոր աշխատանքը ուսումնական աշխատանք է, որն իրականացվում է հիմնական ուսուցման ընթացքում։ Այս աշխատանքի բոլոր տեսակները պլանավորում, կազմակերպում և անց է կացնում դաստիարակը։ Այս աշխատանքները երեք ձևով են կազմակերպվում և պարզից գնում են բարդ.

Առաջին աշխատանքի պարզ տարբերակը հանձնարարությունն է, այն սկզբից անհատական է հետո խմբային կամ ընդհանուր։ Փոքրերի խմբում կարճաժամկետ է և իրադրային բնույթի։ Ավագ տարիքում հանձնարարությունները երկարատև են։ Մանկապարտեզում կազմակերպում ենք նաև հերթապահություններ, որոնք ավելի բարդ գործունեություն է, քանի որ երեխան բոլորի հանդեպ պարտավորություն ունի և պետք է համագործակցի մյուս հերթապահ երեխաների հետ։

Աշխատանքների կազմակերպման ամենարդյունավետ ձևերն են. կոլեկտիվ, համատեղ աշխատանքն է, որի ժամանակ գործնական և ընկերական փոխհարաբերություններ են ձևավորվում։

2. 2. Աշխատանքային դաստիարակության մեթոդները և մանկավարժական պայմանները

Աշխատանքային դաստիարակության միջոցները նախադպրոցական տարիքում.

- Երեխայի ինքնուրույն աշխատանքային գործունեություն,
- Ծանոթացումը մեծահասակի աշխատանքին, տարբեր մասնագիտությունների հետ,
- Գեղարվեստական միջոցներ

Այսօրվա աշխատանքային դաստիարակության գործընթացում կարևորվում է և հիմնական միջոց է համարվում երեխայի ինքնուրույն աշխատանքը: Մյուս երկուսը նպաստում են երեխայի ինքնուրույն աշխատանքի խթանմանն ու ձևավորմանը: Ինքնուրույն աշխատանքային գործողությունների միջոցով լուծվում է աշխատանքային դաստիարակության հիմնական խնդիրը: Ձևավորվում են աշխատանքային կարողություններ և հմտություններ, բավարարվում է երեխաների մեծահասակների կյանքին մասնակից լինելու պահանջմունքը: Երեխաներին մեծերի աշխատանքին ծանոթացնում են երկու եղանակով. կամ երեխան դիտում է նրա պրակտիկ աշխատանքը կամ նրանց գործունեության մասին գիտելիք փոխանցելով:

Գեղարվեստական միջոցներ են մանկական գեղարվեստական գրականությունը, երաժշտությունը, կերպարվեստը, թատրոնը: Աշխատանքային գործողությունների ուսուցման մեթոդներն են.

- Ուսուցում
- Ցուցադրում
- Բացատրում
- Աշխատանքի ընթացքի և արդյունքի նախնական քննարկման մեթոդ
- Աշխատանքի ընթացքի և արդյունքի գնահատում
- Աշխատանքային գործունեության մոդելի կառուցման մեթոդ:

Աշխատանքային դաստիարակության արդյունավետությունը պայմանավորված է գործընթացի կազմակերպման մանկավարժական պայմաններով: Այն կախված է

նրանց տրամադրությունից, աշխատելու ցանկությունից հետևաբար դրական հուզականությամբ հագեցած մթնոլորտը կարևորագույն պայման է: Այն պահանջում է որոշակի նյութատեխնիկական պայմանների առկայություն: Սարքավորումներով հարուստ և գրագետ կազմակերպված աշխատանքային միջավայրը, նպաստում է երեխաների աշխատանքային դաստիարակության արդյունավետությանը: Հաշվի է առնվում աշխատանքի ծանրաբեռնվածությունը, ինչպես նաև կարող է անհետաքրքիր դառնալ, եթե այն չի համապատասխանում տարիքին:

Աշխատանքի գրագետ կազմակերպումը ենթադրում է տարիքի և անհատական կարողությունների համարժեք աշխատանքային խնդիրների առաջացում: Պետք է հաշվի առնել նաև երեխաների ցանկությունը, հետաքրքրությունները: Նշված պայմանները դրական վերաբերմունք է առաջացնում աշխատանքի հանդեպ, խրախուսում երեխայի աշխատելու ցանկությունը ու պատրաստակամությունը, նպաստում է արդյունավետ աշխատանքային գործունեությանը:

Այսպիսով ձևավորված աշխատանքային գործունեությունը դրական է անդրադառնում երեխաների զարգացմանը, նպաստելով հուզական, իմացական ոլորտի բարոյական և կամային հատկությունների ձևավորմանը, երեխայի ինքնասպասարկմանը և ինքնագնահատմանը:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Հետազատական աշխատանքը մանկապարտեզում

Պարապմունք

Տարիքային խումբ՝ 4-5 տարեկան

Պարապմունքի տևողություն՝ 20-25 րոպե

Ոլորտ՝ Խոսքի զարգացում

Թեման՝ Մասնագիտական գործիքներ

Տեսակ՝ զրույց

Նպատակ-Ընդլայնել տարբեր մասնագիտությունների համար անհրաժեշտ գործիքների մասին երեխաների գիտելիքները։

Անհրաժեշտ նյութեր- տեսանյութ, «Հացթուխի երգը», մասնագիտություն պատկերող նկարներ, աշխատանքային գործիքներ պատկերող նկարներ երեխաների թվին համապատասխան, գործիքներ պատկերող գծապատկերներ, գունավոր մատիտներ, թղթեր, սոսինձ։

Ընթացք- Երեխաները նստած են կիսաշրջանաձև, դիտում են տեսանյութը։ Ավարտին հարցնե, ի՞նչ տեսաք հարցը, ուղղել բոլորին։ Լսել յուրաքանչյուրի պատասխանը։ Երեխաներ մենք տեսանք, որ հացթուխի հիմնական գործիքը գրտնակն է։ Այսօր մենք կծանոթանանք մյուս մասնագետների գործիքներին։ Երեխաներին առաջարկել նստել սեղանների մոտ, որի վրա կան գործիքների նկարներ շրջված տեսքով։ Երեխաներ, որոնք են ձեզ ծանոթ գործիքները։ Պատասխաններից հետո երեխաներին առաջարկել նայել նկարներին և խմբով / նույն սեղանի շուրջ նստած երեխաները/ քննարկել, թե որ գործիքը որ մասնագետին է պատկանում/ հետևողական լինել, որ բոլորը մասնակցեն քննարկմանը/։ Ցույց եմ տալիս մասնագետի նկարը երեխան ընտրում եմ համապատասխան գործիքը, բերում դնում նկարի մոտ, բոլոր երեխաները հերթով մոտենում են համապատասխան գործիքը բերում նշելով մասնագետի անունը և գործիքի անունը։

Ակտիվացնող խաղ- Երեխաները կանգնում են շրջանաձև, ես կանգնում եմ

կենտրոնում։ Երեխաներին ասում եմ որևէ մասնագետի անուն, երեխաները մասնագիտությունը բնութագրող շարժումներ են կատարում։ Այդ ընթացքում օգնականը առանձին սեղաններին տեղադրում է մատիտների և գործիքի գծապատկերով նկար ներկելու համար, մյուս սեղանին գծապատկերով նկար, գունավոր թուղթ և սոսինձ որպեսզի թղթերը մանր կտորներով լցնեն նկարը, ծեփամածիկ գործիք ծեփելու համար։ Տրվում է կողմնորոշման հնարավորություն թե ով ինչով է ցանկանում աշխատել։ Հարցերի միջոցով երեխաները արտահայտեցին իրենց կարծիքը։ Երեխաները ընդլայնեցին տարբեր մասնագիտությունների համար անհրաժեշտ գործիքների մասին իրենց գիտելիքները։ Նրանք սովորեցին նոր բառեր /աքցան, գրտնակ, փոցխ/։

Տնօրենի և փոխտնօրենի եզրակացությունը

Ոլորտ՝ Խոսքի զարգացում

Թեմա՝ Մասնագիտական գործիքներ

Տեսակ՝ Զրույց

Երեխաների թիվը՝ 25

Դաստիարակի նպատակն էր ընդլայնել տարբեր մասնագիտությունների համար անհրաժեշտ գործիքների մասին երեխաների գիտելիքները: Երեխաները ծանոթացան մասնագիտությունների հետ՝ գործիքների միջոցով՝ հասկանալով թե որ մասնագետը իր աշխատանքի ընթացքում ինչ գործիքներ է օգտագործում:

Երեխաների թվին համապատասխան պարապմունքին օգտագործվեց գործիքներ պատկերող նկարներ և համապատասխան նյութեր: Խմբի բոլոր երեխաները ներգրավված էին պարապմունքին: Օգտագործվեց մեդիա տեխնոլոգիաներ, ցուցադրվեց տեսանյութ՝ «Հացթուխի երգը», որտեղ ավելի մատչելի կրեպով էր ներկայացվում մասնագիտությունը: Տեսականից հետո ընթացքը տարավ դեպի խթանման փուլ, որտեղ դաստիարակը հարց ու պատասխանի միջոցով ներգրավվեց խմբի բոլոր երեխաներին: Տեսականից հետո անցում կատարվեց գործնականին, որի ժամանակ երեխաները ցույց տվեցին իրենց հմտությունները, աշխատանքային գործիքները տարբերելուն, պատկերելուն, որոնք կատարվեցին համապատասխան աշխատանքի միջոցով/ նկարելու, ծեփամածիկի …միջոցով/:

Դաստիարակը հմտորեն ուղորդում էր երեխաներին, հետևում տարբեր խմբերի աշխատանքներին, միաժամանակ խրախուսելով երեխաների ինքնուրույնությանը: Երեխաները մեծ ոգևորությամբ աշխատում էին, նրանց էլ ավելի հետաքրքրեց գործնական աշխատանքը, որտեղ երեխաները ասում էին թե ով ինչ դառնալու երբ մեծանան, այսինքն աշխատանքային գործիքների իմացությունը նպաստեց նաև նրանց մասնագիտական նախնական կողմնորոշմանը, որը հետագայում կարող է օգնել մասնագիտություն ընտրելուն:

Աշխատանքային դաստիարակությունը կարևորվում է երեխայի զարգացման բոլոր փուլերում, սկսած դեռևս նախադպրոցական տարիքից: Նախադպրոցական

տարիքում ձևավորվում է երեխայի աշխարհընկալումը, ինչպես նաև աշխատանքի նկատմամբ նրա վերաբերմունքը: Այդ իսկ պատճառով կատարվաշ աշխատանքը կարևորվում է իր արդիականությամբ: Այն միտված է վաղ տարիքում շուտ կողմնորոշվելուն, հմտությունների և արժեհամակարգի ձևավորմանը: Պարապմունքի ժամանակ յուրաքանչյուր փոքրիկի փոքր հաջողությունը խմբում ընդունվեց ցնծությամբ, նրանց փայլուն աչքերը խոսեցին դաստիարակի վարպետության մասին, որը նրա աշխատանքի հաջողության գրավականն է:

Տնօրեն՝ Էլմիրա Խաչատրյան

Միջին Ա խումբ

Դաստիարակ՝ Մարինե Իսախանյան

Ուղորտ՝Խոսքի զարգացում

Թեմա ՝ Մասնագիտական գիտելիքներ

Տեսակ՝ զրույց

Տևողություն 20-25 րոպե /երեխաների թիվ 25/

Նպատակ՝ երեխաներին ծանոթացնել մեծերի աշխատանքային գործիքների

Դաստիարակը հետազոտական աշխատանք է իրականացնում մանկապարտեզում, նախադպրոցական երեխաների աշխատանքային դաստիարակության գործընթացի կազմակերպման ուղղությամբ: Նա տարբեր ուղորտներում տարբեր աշխատանքային միջավայր էր ստեղծում, որտեղ երեխաները իրենց աշխատանքային գործունեությունն էին կատարում, առանց իմանալու, որ իրենց աշխատանքը հետազոտվում է: Դաստիարակը երեխաների հետ կազմակերպեց մեծերի աշխատանքի դիտումներ, խոհարարի, բուժքրոջ, բակապանի աշխատանքները: Նրանք ծանոթացել էին նաև նրանց գործիքներին: Դրա հիման վրա անց էր կացվել նաև պարապմունք «Մասնագիտություն» թեմայով:

Դաստիարակի հաջորդ քայլը այն է, որ պետք է երեխաներին ծանոթացնել աշխատանքային գործիքներին։ Դաստիարակը ստեղծեց համապատասխան միջավայր և այնտեղ անցկացրեց պարապմունք «….. գործիքների» թեմայով։

Պարապմունքը շատ հագեցած էր, դիդակտիկ նյութերով, պարագաներով։ Երեխաները դիտեցին «Հացթուխի երգը» տեսաֆիլմը, որը անցկացվեց խթանման փուլում։ Պարապմունքը անց էր կացվում / Խ.Ի.Կ./ համակարգով։ Տարբեր մեթոդներով անցկացվեց պարապմունքը։ Երեխաները կարողացան հիշել, թե ինչ գործիքներ գիտեին, հետո սովորեցին նոր գործիքների անուններ, կարողացան տարբերել, թե որ գործիքը, որ մասնագետին է պատկանում։

Երեխաները պարապմունքի վերջում՝ իմաստի ընկալման փուլում իրենց գիտելիքները ամրապնդեցին կարպարվեստային աշխատանքներում։ Պարապմունքը հաջողված էր, դաստիարակը հասավ իր նպատակին։ Երեխաները ակտիվ էին, բոլորը մասնակցում էին։

Փոխտնօրեն՝ Թեհմինե Սարգսյան

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով նախադպրոցական տարիքում հատկապես կարևորվում է երեխաների աշխատանքային դաստիարակությունը: Այնպիսի կարևոր հատկանիշներ, ինչպիսին են աշխատասիրություն, սերը աշխատանքի և աշխատավոր մարդու նկատմամբ, հարկավոր է երեխաներին ներարկել դեռ մանկուց: Դեռ վաղ տարիքից երեխաներին պետք է սովորեցնել սեփական ուժերով բավարարել պահանջմունքները.

- Զարգացնել ինքնասպասարկումը
- Ծանոթացնել մեծերի աշխատանքին
- Ձևավորել պատկերացումներ հասարակական աշխատանքի վերաբերյալ և արժեվորել այն
- Հարգել մեծերի աշխատանքը, խնամքով վերաբերվել նրանց աշխատանքի արդյունքին:

Աշխատանքային դաստիարակությունը երեխաների համակողմանի և ներդաշնակ զարգացման հիմնախնդիրն է: Պետք է երեխաներին ներշնչել աշխատելու ցանկություն և ուղղորդել նրանց: Շատ կարևոր է, որ մենք կարողանանք երեխայի մեջ աշխատանքի նկատմամբ հուզական և դրական վերաբերմունք ստեղծել: Յուրաքանչյուր դաստիարակ պետք է մեծ պատասխանատվություն ցուցաբերի վաղվա խելացի, աշխատասեր, նախաձեռնող, հմուտ, որոշում կայացնող, դիրքորոշում ունեցող քաղաքացու կրթության և դաստիարակության համար /Ինչ ցանենք, այն էլ կհնձենք/:

Հետազոտության ընթացքում կազմակերպված խաղերը, ինքնասպասարկումը աշխատանքները և պարապմունքները ևս մեկ անգամ հաստատեց, որ աշխատանքային դաստիարակությունը երեխաների համակողմանի զարգացման, կրթության և դաստիարակության համար ամենակարևոր գործընթացն է: Երեխան աշխատում է խաղալով, սովորում է աշխատելով: Երեխաները ազատ, ինքնուրույն, իրենց նախաձեռնությամբ աշխատում են աշխատանքային կենտրոններում, որը նպաստում է նրանց բազմակողմանի զարգացմանը:

Մեծ մանկավարժ Սուխոմլինսկին այսպես է բնութագրել երեխայի

աշխատանքը. Աշխատանքի պատճառած բերկրանքը չի կարելի համեմատել որևէ այլ բերկրանքի հետ։ Այն անիմաստ է առանց գեղեցկության զգացումի, բայց այստեղ գեղեցկությունը միայն այն չէ, ինչ ստանում է երեխան, այլև ամենից առաջ այն, ինչ նա ստեղծում է աշխատանքի բերկրանքով՝ դա կեցության գեղեցկությունն է։ Ճանաչելով այդ գեղեցկությունը, երեխան ապրում է սեփական արժանապատվության և հպարտության զգացում այն գիտակցությունից, որ դժվարությունները հաղթահարել է։ Եթե չկա երեխայի ուժերի ներածին չափ աշխատանքային լարվածություն, երեխայի համար անմատչելի կմնա աշխատանքի բերկրանքը։ Աշխատանքում բացահայտվում են մարդկային հարաբերությունները։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. 1. «Աշխատանքային դաստիարակության կազմակերպումն ու պլանավորումը մանկապարտեզում» 1988թ.

1. 2. «Մանկավարժության դասագիրք» /հին գիրք, չկան հեղինակի անունը և հրատարակման տեղ/թիվ/

1. 3. Հ.Միտոյան, Լ.Սմբատյան «Ուսումնական ձեռնարկ», 2007

1. 4. «Սովետական մանկավարժ ամսագիր» 1987

1. 5. Նախադպրոցական մանկավարժություն https://nelikopoxosyan.files.wordpress.com/2019/05/d586d5a1d5add5a1d5a4d5bad680d5b8d681d5a1d5afd5a1d5b6-d5b4d5a1d5b6d5afd5a1d5bed5a1d680d5aad5b8d682d5a9d5b5d5b8d682d5b6.-d5b1d5a5d5bcd5b6d5a1d680d5af-1.pdf